


Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան երէկ հանդիպում ունեցաւ Լեոնային Ղարաբաղի նախագահ Արկաղի Ղուկասեանի, խորհրդարանի նախագահ Օլէկ Եսայեանի եւ վարչապետ Անուշաւան Դանիլեանի հետ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան Հայաստանի եւ Լեոնային Ղարաբաղի միջեւ համագործակցութեան առնչուող բազմաթիւ հարցեր: Կողմերը մտքեր փոխանակեցին Լեոնային Ղարաբաղի ընկերային - տնտեսական իրավիճակին մասին:

ՆԱԽԱԳԱՅ ԼԱՅՈՒՄՆԵՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ՝ ՆԱԽԱԳԱՅ ՔՈՉԱՐԵԱՆԻ



Նախագահ Լահուտ կ'ընդունի Բրիտանիոյ դեսպանը

Նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երէկ հեռագիր մը յղեց Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանին՝ շնորհաւորելու համար Հայաստանի անկախութեան տօնը:

Նախագահ Լահուտ իր եւ իր անունի ժողովուրդին անունով շնորհաւորական խօսք ուղղեց նախագահ Քոչարեանի եւ յայտնեց իր բարեմաղթութիւնները նախագահին եւ բարեկամ հայ ժողովուրդին:

Նախագահ Լահուտ այս առիթով վերանորոգեց նաեւ իր խոսուածը՝ գործադրելու Հայաստանի իր այցելութեան ընթացքին ստորագրուած բոլոր համաձայնագիրները, որոնց նպատակն է բարելաւել Հայաստան - Լիբանան երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ ամրապնդելու հայ եւ իրանական ժողովուրդներուն միջեւ բարեկամութիւնն ու համագործակցութեան ոգին:

Նախագահ Լահուտ շնորհաւորական հեռագիր մը յղեց նաեւ Մեծաբնակ Արաբիոյ թագաւորին, Մեծաբնակ Արաբիոյ պագային տօնին առիթով: Ան Ֆահրտ թագաւորին եւ մեծաբնակ

Շար.Չ՝ էջ 2

ՍՈՒՐԻԱ ՄԱԿԵՆ ԿԸ ՊԱՀԱՆՁԷ ՍԱՆՁԵԼ ԻՍՐԱՅԷԼԸ

ԴԱՄԱՍԿՈՍ, 23 (ՌՈՅԹԸՐԸ).- Սուրիա կոչ ուղղեց ՄԱԿին՝ սանձելու Իսրայէլն ու պաղեստինցիներուն դէմ ձեռնարկած անոր պինդութեան գործողութիւնը, դիտել տալով, որ պաղեստինցիները Իսրայէլեան տագնապն ալ արժանի է Իրաքի չափ ՄԱԿի տուած կարեւորութեան եւ ուշադրութեան:

Տեղեկատուութեան նախարար Ատնան Օմրան ըսաւ, որ պաղեստինեան հարցը աշխարհը, ՄԱԿն ու Ապահովութեան խորհուրդը յուզող գլխաւոր հարցն է: Օմրան յիշեցուց, որ որեւէ հարցի վերաբերեալ Ապահովութեան խորհուրդը պաղեստինեան հարցին մասին տուած որոշումներուն թիւով բանաձեւեր չէ հրապարակած:

Օմրան կոչ ուղղեց ՄԱԿի՝ փրկելու պաղեստինցիները Իսրայէլեան տագնապը լուծելու նպատակով տուած որոշումները: Ան ընդգծեց կարեւորութիւնը Ապահովութեան խորհուրդին դերակատարութեան, որովհետեւ անիկա սկսած է շահագործուիլ՝ արդարացնելու համար Իրաքի դէմ աներկեան հաւանական գործողութիւն մը: «Ժամանակը հասած է, որպէսզի Ապահովութեան խորհուրդը տէր կանգնի իր տուած որոշումներուն ու փրկէ պանոսը», նշեց ան:

Սուրիա կ'ըսէ, որ Ուաշինկթըն չի կրնար Իրաքի դէմ յարձակումի մը պարտաւորութիւն պահանջել, երբ կ'անտեսէ արաբեւիսրայէլեան բազմամեայ տագնապը: Օմրան ըսաւ նաեւ, որ Իսրայէլի հանդէպ բանաձեւեր պէտք է որդեգրուին եւ անկէ հաշի պահանջուի, որովհետեւ հրէական պետութիւնը անընդհան կը խախտէ Ապահովութեան խորհուրդին որոշումները:

Օմրան շեշտեց նաեւ, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն հակամերիկեան պայմանութիւններ կը հրահրէ շրջանին մէջ՝ պաղեստինցիներուն հանդէպ որդեգրած միջոցառումներով: Սուրիացի նախարարը դիտել տուաւ, որ Շարոն ոչ միայն կը փորձէ կործանել ու բնաջնջել պաղեստինցի ժողովուրդը, այլեւ՝ Միջին Արեւելքի մէջ կործանել աներկեան շահերը:

ՊԱՂԵՍՏԻՆՑԻ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐՈՒ ԸԱՆԴԻՊՈՒՄԸ՝ ԱՊԱՐԴԻԻՒՆ



Արաֆաթի կեղծոճատեղի՝ քարուքար

Ետեւ Երաֆաթի նստավայրին պաշարուածէն չորս օր ետք, իսրայէլացի ու պաղեստինցի պաշտօնատարներ երէկ առաջին անգամ ըլլալով հանդիպում մը ունեցան, որուն ընթացքին սակայն չլսողեցան լուծել չորսօրեայ տագնապը:

Հանդիպումէն ետք իսրայէլեան բանակը կարճ ժամանակուան մը համար քակեց Երաֆաթի նստավայրին շուրջ հաստատուած պաշարման օղակը, առիթ տալու համար գլխաւոր բանազնաց Սաէպ Ուրաբաթի, որ տեսակցութիւն ունենայ

Արաֆաթի հետ ու զեկուցէ անոր իսրայէլացիներուն հետ հանդիպումին մասին: Ուրաբաթ ըսաւ, որ իսրայէլացի պաշտօնատարները մերժած են իրեն յանձնել անուանացանկը հետապնդուած

Շար.Չ՝ էջ 10

ԻՐԱՔԻ ԴԵՄ ՈՐՈՇՈՒՄ ՍԸ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ԶԱՄԱՐ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԵՒ ԼՈՆՏՈՆ ԹԱՓ ԿՈՒ ՏԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՄԷՁ ԾՆՇՈՒՄՆԵՐՈՒՆ

Իրաք «չարամիտ» որակեց ՄԱԿի մէջ իրեն դէմ բանաձեւեր որդեգրելու ամերիկեան ճիգերը՝ շեշտելով, որ Ուաշինկթըն կ'ուզէ ՄԱԿի «ծածկ» մը ապահովել զինուորական գործողութեան մը:

Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա թափ կու տան Ապահովութեան խորհուրդին մէջ «ճշմունքներուն» Իրաքի դէմ խիստ ու կարծր որոշում մը որդեգրելու համար, զէնքի քննութիւններուն վերսկսել առաջ:

Իրաքի փոխ նախագահ Թահա Եասիմ Ռամատան ամբաստանեց ամերիկեան կառավարութիւնը՝ դիտել տալով, որ անիկա կ'ուզէ հետապնդուած բանաձեւեր օգտագործել յարձակում մը գործելու համար Պաղտատի վրայ: Ռամատան շեշտեց, որ ՄԱԿ պէտք չէ դառնայ պատուանդանը, որկէ Ուաշինկթըն պիտի ձեռնարկէ յարձակումին:

Մինչ այդ, Բրիտանիա երկ կայտնեց, որ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը յառաջիկայ քառօրեայ օրերուն պիտի բանաձեւէ Իրաքի մասին մտր որոշում մը, որ Մատամ շիւսէյնէն պիտի պահանջէ յարգել ու գործադրել ապահովութեան խորհուրդի բոլոր որոշումները, այլապէս՝ պիտի կրէ հետեւանքը: Վարչա-

պետ Թոնի Պլէրի բանաձեւերը հաւաստեց, որ շուտով պիտի որդեգրուի մտր որոշումը: Բանաձեւը կը խօսէր այն պահուն, երբ Պլէր կը պատրաստուէր արտակարգ հանձնարարներուն հետ, որպէսզի համոզուէ այն մտաւարները, որոնք համաձայն չեն, որ Բրիտանիա պէտք է զօրավիզ կանգնի Իրաքի դէմ ամերիկեան յարձակումի մը մը: Կառավարութեան հանդիպումին Պլէր պիտի ներկայացնէ Սատ-

տամի դէմ փաստեր պարունակող թղթածրար մը, որպէսզի թերահաւատ մտաւարները համոզուին ու զօրավիզ կանգնին վարչապետին:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու նախագահ Գործ Պոլ Սքոթը շեշտեց, որ իսրայէլացիները չեն զօրաւոր ու կարծր կեցուածք որդեգրելու Իրաքի դէմ, Ուաշինկթըն

Շար.Չ՝ էջ 10

ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒ ԲԱԺԱՆՈՒՄ

ՓՈՒԹԻՆ ԵՒ ԱԼԻԵՒ ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ ԶԱՍԱԶԱՅՆԱԳԻՐ ՍԸ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին եւ Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ երէկ Մոսկուայի մէջ ստորագրեցին Կասպից ծովու բնական հարստութիւններու բաժնեկցութեան մասին համաձայնագիր մը:

Համաձայնագիրին մէջ երկու երկիրները յստակեցուած են իրենց միջեւ Կասպից ծովու յատկապէս սահմաններ, մինչ Կասպիցի ջուրերը եւ մակերեսը մնացած է ընդհանրական: Մինչեւ վերջերս այս տեսակի բաժանման դէմ էր Իրան, իսկ Ռուսիա նման համաձայնագիր արգէն ստորագրած էր Ղազախստանի հետ: «Այս որոշումին հասնելու համար մենք երկար ճանապարհէ մը անցած ենք, ունեցած ենք բազմաթիւ վէճեր եւ երկու կողմերն ալ աշխատած են լարուած վիճակի մէջ, սակայն կ'ուզեն ընդգծել, որ այս մէկը եղած է շահագրգիռ զործնակներուն աշխատանք, եւ ուրախ եմ, որ աւարտեցաւ այդպիսի զրական արդիւնքով», համաձայնագիրի ստորագրութենէն ետք յայտարարած է Փութին:

Շար.Չ՝ էջ 3

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՆԱԽԱԳԱՅ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ

Հայաստանի անկախութեան 11րդ տարեդարձին առիթով, Շաբաթ, 21 Սեպտեմբեր 2002ին, Արամ Ա. Կաթողիկոս հետեւեալ շնորհաւորական գիրը յղեց Հայաստանի Հանրապետութեան նախագահ Ռոպերթ Քոչարեանին:

Նորին վստելութիւն Ռոպերթ Քոչարեան Նախագահ Հայաստանի Հանրապետութեան Երեւան:

Սիրելի՛ պրն. Նախագահ, Այսօր, Հայաստանի անկախութեան 11րդ տարեդարձին օրը, իւրաքանչիւր հայու եւ համայն հայութեան սիրտը կը լեցուի ուրախութեան ու ինքնավստահութեան արդար պատմութեան ու հպօրացման ընթացքի մէջ եղող պատ ու անկախ Հայաստանի: Արդարեւ, Հայաստանի վերանկախացումով մեր ազգային երազը իրականացաւ: Այսօր Հայաստանի թէ աշխարհի ամբողջ տարածքին վրայ գտնուող իւրաքանչիւր հայ հպարտ է ու ինքնավստահ իր հայրենիքով: Սակայն, չի՛ բաւեր միայն հայրենիքով հպարտանալ: Իւրաքանչիւր հայու ու համայն հայութեան սրբապան պարտքն է գործնապէս մասնակից դառնալ հայրենասիրութեան խորհրդակցան առաքելութեան:

Դուք, սիրելի՛ պրն. նախագահ, ամբողջական յանձնառութեամբ լծուած էք այս աշխատանքին: Մենք մօտէն հետեւեցանք ու կը հետեւինք ձեր աշխատանքներուն: Արդարեւ, ձեր նախագահութեան տարիներուն Հայաստանի թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ճակատներու վրայ, թէ՛ տնտեսական եւ թէ՛ միջպետական յարաբերութեանց բնագաւառներէն ներս նշանակալից իրագործումներ արձանագրած է: Ձեր նախագահութեան շրջանին միջոց նաեւ տեսանք մեր ժողովուրդին ներքին միասնականութեան ամրապնդման ընթացքին մէջ կարեւոր նուաճումներ, յատկապէս Հայաստան-Սփիւռք համահայկական խորհրդածողութեան գումարումով եւ մեր կեանքին մէջ գործող կապակերպութիւններուն ու կառուցելուն միջեւ դրական յարաբերութիւններուն ու գործակցութեան կարգացումով: Վստահ ենք, որ այս բոլորը մեծապէս պիտի նպաստեն Հայաստանի անկախութեան առաւել ամրապնդման աշխատանքներուն:

Սիրոյ ջերմ ողջունիլ՝ Աղօթաբարձ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆ ԿԵԼԻԿՈՅ Շար.Չ՝ էջ 2

ԱԼԻԵՒ ԳՈՂ Է ՓՈՒԹԻՆԸՆ

Անցնող շաբաթավերջին Ազրպէյճան այցելեց Ռուսիոյ Պետական Տուրաշի (խորհրդարան) մէկ պատուիրակութիւնը: Տուրաշի նախագահ Կենատի Սելեզնիովի զվարեւորած պատուիրակութիւնը հանդիպումներ ունեցաւ Ազրպէյճանի ղեկավարութեան հետ:

Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ ռուսական պատուիրակութիւնը ընդունեց Կիրակի, 22 Սեպտեմբերին: Հանդիպումէն ետք Ալիեւ զփոփոխութիւն կայտնեց, որ անցեալին Ռուսիա Լեոնային Ղարաբաղի տագնապին զծով կ'աջակցէր Հայաստանի, «եւ նոյնիսկ ներկայացուցած է առաջարկ մը, որուն համաձայն, Ազրպէյճան եւ Լեոնային Ղարաբաղ պիտի միանային ընդհանուր պետութեան մը մէջ»:

«Ազատութիւն» ռատիոկայանին համաձայն, Ալիեւ իսկոյն փոխած է իր քննադատական ոճը՝ նշելով, որ Վլատիմիր Փութինի իշխանութեան գալէ ետք «Ռուսիոյ մօտեցումը Լեոնային Ղարաբաղի տագնապին աւելի հաւասարակշռուած սկսած է դառնալ»: Անդրադառնալով պատերազմի հաւանականութեան, Ալիեւ նշած է, թէ տագնապին լուծման յետաձգումը «կը սաստկացնէ ազրպէյճանցիներու ռազմաշունչ տրամադրութիւնները»: Մարդիկ պատրաստ են մտնելու Ղարաբաղի պատերազմի հաւանականութեան, Ալիեւ նշած է, թէ Լեոնային Ղարաբաղի տագնապ պէտք է լուծուի միջազգային կազմակերպութիւնները, նախեւ առաջ եւ ԱԶԿԻ եւ Մինսքի խմբակի նախագահները, եւ ոչ թէ ազգային խորհրդարանները: Նոյնանման կարծիք կայտնած է նաեւ Մուրթուզ Ալեքսեբով:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՏՆԵՇՆԵՐԸ ՊԵՏԵ Է ՔԱՆԴՈՒՄ

Կ'ԸՍԵ ՄԵՐ

Ներքին գործոց նախարար Էլիաս Մըր երեկ վարչական ապակեդրոնացումին մասին խորհրդածոցովի մը արտասանած իր խօսքին մէջ ըսաւ, որ այս դրութեան հաստատումը նախատեսուած է Թաէֆի համաձայնագրին մէջ եւ անոր գործադրութիւնը անհրաժեշտ է:

«Կ'ուզենք, որ ընտրութեան օրէնքը վերջ դնէ համայնքային պատնէշներուն, երաշխաւորէ բոլորին իսկական մասնակցութիւնը, պահպանէ միասնութիւնը եւ փակէ ծայրայեղականութեան եւ ինքնապաշտպանական ծրագիրներու հետեւորդներուն առջեւ ճամբաները», ըսաւ ան՝ ընդգծելով, որ այս օրէնքը պետք է արգիլէ կիրքերու հրահրումն ու երկիրը անդունդի տանող հոսանքներուն յաջողութիւնը:

«Կ'ուզենք, որ ամբողջ հայրենիքը ընտրէ ժողովուրդին ներկայացուցիչները ամբողջ հայրենիքին համար, իսկ ժողովուրդին ներկայացուցիչները բոլոր համայնքներէն պետք է ըլլան, բայց այդ համայնքներուն ներկայացուցիչները պետք է ըլլան, այլ՝ ամբողջ հայրենիքին: Իսկ խորհրդարան հասցնող ճամբան ապագային եւ ո՛չ թէ հատուածական ոճը պետք է ըլլայ», ըսաւ նախարար Մըր՝ քննադատելով արտաքին կողմերու ձեռնարկ փոփոխութիւններու վրայ գրաւ դնող արկածախնդրութիւնները:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԷ

«ԱՐԵԳ»-ը կը վերսկսի 2002-2003 տարեշրջանի իր աշխատանքներուն:

Արձանագրութիւնները, հին եւ նոր աշակերտներուն համար տեղի պիտի ունենան Շաբաթ, 28 Սեպտեմբերին, կէսօրէ առաջ ժամը 10:00էն 12:00, «Լ. Ծանթ» կեդրոն, 3րդ յարկ, վարչութեան գրասենեակը:

Վերամուտ՝ Շաբաթ, 5 Նոյեմբերին:

«ԱՐԵԳ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱՆՈՒՄԷ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԷ

Տաքէ արք. Սարգիսեան, տըր եւ տիկին Վահէ եւ Նորա Սարգիսեան եւ զաւակները, տիկին Թամար Սարգիսեան-Վորոնց եւ համայն Սարգիսեան եւ Փոլաւտեան ընտանիքներ շնորհակալութիւն կը յայտնեն Ն. Ս. Օ. Ս. Տ. Քարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսին, Ն. Ս. Օ. Ս. Արամ Ա. Սեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Սուրբ արք. Գաթարոյեանին, Սուրբ եպ. Սարգիսեանին եւ բոլոր անոնց, որոնք իրենց ներկայութեամբ, ծաղկեպսակով, հեռագիրով եւ նուիրատուութեամբ մասնակից եղան իրենց մօր, մեծ մօր, հորաքրոջ եւ ազգականին՝ Տիրամարտի Սուրբ-Ստեփաննի մահուան սուգին:

ՎԱՆԱՅ ԶԱՅՆ **ՎԱՆԱՅ ԶԱՅՆ**

Այսօր, կէսօրու ժամը 10:00ին կը մտնէ լիբանանահայ երեք համայնքապետներուն՝

ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ
ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱԾԳԱՐԵԱՆԻ եւ
ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՓՕԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆԻ

Խօսքերը՝ Աղբալեան - Բ.Ս.Բ.Ս. Բանալիի բացումին առիթով:

● 3այտագիրին կրկնութիւնը՝ երեկոյեան ժամը 6:00ին:

ՄԱՀԱԶԳ

- Տիկին Սիմա Քէշիշեան
- Տէր եւ տիկին Գէորգ Քէշիշեան
- Տէր եւ տիկին Երկիր Անտոնով
- Տիկին Նոյեմի Քէշիշեան եւ զաւակները
- Տէր եւ տիկին Ազատ Քէշիշեան եւ զաւակները
- Տէր եւ տիկին Յակոբ Քէշիշեան եւ զաւակները
- Քէշիշեան ընտանիք
- Գալաթեան ընտանիք
- Գուտուզեան ընտանիք
- Ազըլեան ընտանիք
- Ապունեան ընտանիք
- եւ համայն ազգականներ կը գումար իրենց ամուսնոյն, հօր, զաւակին, եղբոր, հօրեղբոր, անբող եւ հարազատին՝

ԿԱՐԱՊԵՏ ԸԷՇԻՇԵԱՆԻ (Ծնեալ՝ 1945ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 22 Սեպտեմբեր 2002, երկկոյեան ժամը 9:00ին, ինքնաշարժի արկածի պատճառով:

Յուշարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 23 Սեպտեմբեր, կէսօրէ ետք ժամը 4:00ին, Զալբալի Հայ կաթողիկէ Ս. Խաչ Եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ գերեզմանատունը:

- Ներկայ ընդունիլ իբրեւ մահապղ:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Պալիմ, «Սէյետ Էլ Պիր» վանքին մօտ, Ներքալբալի 24, Չորեքշաբթի 25 եւ Հինգշաբթի 26 Սեպտեմբերին:

ՊԵՐՐԻ ՎԻԵՆՆԱ Կ'ԱՅՑԵԼԷ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երէկ Վիեննայի մէջ տեսակցութիւններ ունեցաւ Աւրտրիոյ նախագահ Թոմաս Բլիսթեյի, խորհրդարանի նախագահ Հայնց Ֆիշըրի եւ արտաքին գործոց նախարար Պէնիթա Ֆերեր Վալտերի հետ:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի ներկայացուց Միջին Արեւելքի հարցերուն վերաբերեալ Լիբանանի տեսակէտները:

Լիբանանի նախագահներուն ողջունները, եւ թէ Աւստրիոյ նախագահը զօրակցութիւն յայտնած է Ուսպանիի ջորերուն եւ Մապրէի Շրպայի գծով Լիբանանի իրաւունքներուն եւ խստի դատապարտած է պաղեստինցի ժողովուրդին դէմ գործուող արարքներն ու իրաքի վերաբերեալ միջազգային կանոններու անտեսումը:

ՍՖէՅՐ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԻՏԻՆ

Մարոնիներու Նաւարալա Պուրոս Սֆէյր պատրիարքը երէկ ընդունեց այցելութիւնը տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտի, որ տեսակցութեան ետք դրուատելով խօսեցաւ պատրիարքին բնական եւ չափաւորական կեցուածքներուն մասին՝ կոչ ուղղելով բոլոր կողմերուն որդեգրելու նոյն ոճը մասնաւոր շրջանային այս պայմաններուն մէջ: Ան նաեւ հաստատեց, որ վերջին շրջանին Սֆէյր պատրիարքին եւ Քըրնէթ Շահուանի Հանրապետութեան նախագահին հետ երկխօսութիւնները նաեւ արժանաւորելի են:

Սուլայտ, Մանսուր Պոն եւ Պուրոս Հարպ, ինչպէս նաեւ ժըպան Թուէյի:

Սուտրիոյ խորհրդարանի նախագահ Հայնց Ֆիշըրը կարմանք յայտնեց Ուսպանիի ջորերուն հարցով հարայելի վարչապետին բարձրացուցած աղմուկին համար, իսկ Պաղեստինի վիճակին մասին ըսաւ, որ անիկա ողբերգական եւ դժուար է, «իսկ ամերիկացիք կը վարուին այնպէս, կարծէք Միջին Արեւելքի տէրերն են եւ թոյլ չեն տար, որ մէկը միջամտէ»: Ան նաեւ ըսաւ, որ իրաքի իշխանութեանը ընդհանուր քննադատելի ըլլալով հանդերձ, այս հարցին գծով պետք է յարգուին միջազգային օրէնքները:

Սֆէյր նաեւ ընդունեց Ազգային Պրոք Կուսակցութեան ղեկավար Քարլոս Էտտէն եւ կուսակցութեան ընդհանուր քարտուղար Անթուան Բլիմսը:

Էտտէ ըսաւ, որ Պրոքը մաս կը կապէ Քըրնէթ Շահուանի Հանրապետութեան հետ շուրջ մեծամասնութեամբ կէս տրոխի, իսկ հանդիպումին

հետ իր գլխաւոր տարակարծութիւնները կը վերաբերին Թաէֆի համաձայնագրին, որուն գծով վերապահութիւններ ունի, եւ սուրիական ուժերու վերադառնալու մասին:

Այնուհետեւ Սֆէյր ընդունեց Քըրնէթ Շահուանի Հանրապետութեան նախագահ Ամին Ժեմալէ, երեսփոխաններ Նայիլա Մուաուատ, Ֆարէս

GET YOUR COLLEGE CERTIFICATE IN 3 MONTHS ONLY AT SAINT JOSEPH TECHNICAL COLLEGE - BEIRUT

A Branch of Saint Joseph School - Cornet Chahwan

Apply In person every day starting 3:00 pm. Beirut Campus: Saint Joseph Technical College Bldg. [next to Mar Maroun Church - Bauchrie] Phone: 01 / 240444 - Mobile: 03 / 339524 - 03 / 354411 E - mail: sjs_college@yahoo.com Contact: VAROUJ BOZIAN

ՇԱՆՈՒ ՏՈՒՆ

● Արագած ակումբին դիմաց երկարակամ շէնք մը՝ հողով միասին: Հեռ. 01 - 268647:

ՀԱԼԷՊ **ՀԱԼԷՊ**

ՀԱՌԻՐՏ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԳԵՐԵՆԻ ԴԱՐՆԱԹՅՔՆԵՐ

Յատուկ դասընթացներ, երեկոյեան ժամերուն, աշխատող երիտասարդներու համար:

Արձանագրութեան համար դիմել
Ը. ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆ ԴԱՐՆԱՏՈՒՆ, Գալթա:
Հեռաձայն՝ 4645202:

ԿՈՒՉՈՒԻ

● Հաստատութիւն մը կարիք ունի ցուցողապարհին մէջ վաճառող օրինորդ մը՝ ուսման միջնակարգ մակարդակով: Դիմել՝ հեռ. 01 - 258081:

Ս. ԱԳՆԷՍ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՎԱՐԺԱՐԱՆ

2002-2003 տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները հին եւ նոր աշակերտներուն համար պիտի կատարուին Երկուշաբթի, 9 Սեպտեմբերին սկսեալ, ամէն օր առաւօտեան ժամը 8:30էն 12:30, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Դիւրացնելու համար վերամուտի աշխատանքները, նախկին աշակերտները պարտին արձանագրելի որոշուած թուականներուն:

Նորէլ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնութեան թուրքի լուսապատճէն կամ «հիւրած քայտ», 2 լուսանկար եւ նախորդ տարուան վիճակագրոյցը:

Մանկապարտէս կ'ընդունուին երեք տարեկանէ վար փոքրիկները, պայմանաւ որ ամօնք կարողութիւն ունենան հասկնալու եւ հասկնուելու:

Վերաքննութիւնները տեղի կ'ունենան Ուրբաթ 13 Սեպտեմբերին, առաւօտեան ժամը 9:00ին:

● ՎԵՐԱՄՈՒՏ
● ՎԵՐԱՄՈՒՏ
● ՎԵՐԱՄՈՒՏ

Սիջակարգ (պրոփ) Երեքշաբթի, 17 Սեպտեմբերին
Սիջակարգ (7րդ-8րդ) եւ նախակրթարան՝ Երկուշաբթի, 30 Սեպտեմբերին
Սանկապարտէս Հիգաշաբթի, 3 Նոյեմբերին
● ՎԱՐԻ ՎԵՐԱՄՈՒՏ

ՆՍՐԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԳՆԷՍ ՎԱՐՃԱՐԱՆԻ

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Անձի Գասպարեանի մահուան քառասունօրեան առիթով, տիրար Արսէն Չաղլաւտեան 25,000 լ.ռ.՝ ԼՕՍԻ «Ա. Պուլղոյեան» ընկերութեան կողմէն:

ԿՈՒՉՈՒԻՆ

● Ոսկերչատուն մը կարիք ունի գիրքն քար գամող գործակողներու: Հեռ. 01-890951:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՄԵՐ

● Բոլոր կարգերու եւ բոլոր դասանիւթերու՝ անգլերենով: Հեռաձայնել՝ 03 - 732665 թիւին:

ԵՐԵՎՈՒՆԱՆ ԳԱՍԱՐԾԻ ԱՅՑԵԼԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց երեսփոխան ճորճ Գասարճին, որուն հետ քննարկեց մարմնակրթութեան մարզին առնչուած հարցեր:

Հանրային մէջ ետք Գասարճի յայտնեց, որ քննարկուած են մարմնակրթութեան եւ երիտասարդութեան ծրագրի ներս հարցեր եւ տարբեր մարզեր, որոնց մէջ երիտասարդութիւնը կրնայ իր ներդրումը բերել եւ աշխատիլ իրանաւեան տարբեր շրջաններուն մէջ:

Նախարար Յովնանեան ընդունեց նաեւ նաեւ «Փիւնիկեան» ակումբի նախագահ Սալիտ Ղրէյլեպը, որ Յովնանեանի ներկայացուցած փաստաթուղթերը մասնակցեցող նաեւ մարզին մէջ յիշանաւեան ֆէտերատիւնի արձանագրած օրէնքին խախտումները:

Այդ խախտումներն կը նկատուին ճշմարտութեան փաստաթուղթը, որոնք պարտին են, նաեւ միջազգային ֆէտերատիւնի օրէնքներուն հիմամբ:

Ղրէյլեպ յայտնեց, որ Յովնանեանի պիտի ներկայացնէ ամբողջական թղթաժողով, որ կ'արտունակէ արձանագրուած օրինակագրութիւնները մասնաւոր բոլոր փաստաթուղթերը:

Միւս կողմէ, նախարար Յովնանեան ներկայ գտնուեցաւ Լիբանան - Սուրիա միացեալ բանակումի փակման հանդիսութեան: Ներկայ ինչ նաեւ սուրիական «Սաուրա» Երիտասարդական Միութեան նախագահ Անուան Արապ, Լիբանանի Սկաւտներու Միութեան նախագահ Ռուքայ Քասախ, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ պաշտօնատարներ:

Ղրէյլեպ յայտնեց, որ Յովնանեանի պիտի ներկայացնէ ամբողջական թղթաժողով, որ կ'արտունակէ արձանագրուած օրինակագրութիւնները մասնաւոր բոլոր փաստաթուղթերը:

Միւս կողմէ, նախարար Յովնանեան ներկայ գտնուեցաւ Լիբանան - Սուրիա միացեալ բանակումի փակման հանդիսութեան: Ներկայ ինչ նաեւ սուրիական «Սաուրա» Երիտասարդական Միութեան նախագահ Անուան Արապ, Լիբանանի Սկաւտներու Միութեան նախագահ Ռուքայ Քասախ, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ պաշտօնատարներ:

Միւս կողմէ, նախարար Յովնանեան ներկայ գտնուեցաւ Լիբանան - Սուրիա միացեալ բանակումի փակման հանդիսութեան: Ներկայ ինչ նաեւ սուրիական «Սաուրա» Երիտասարդական Միութեան նախագահ Անուան Արապ, Լիբանանի Սկաւտներու Միութեան նախագահ Ռուքայ Քասախ, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ պաշտօնատարներ:

Միւս կողմէ, նախարար Յովնանեան ներկայ գտնուեցաւ Լիբանան - Սուրիա միացեալ բանակումի փակման հանդիսութեան: Ներկայ ինչ նաեւ սուրիական «Սաուրա» Երիտասարդական Միութեան նախագահ Անուան Արապ, Լիբանանի Սկաւտներու Միութեան նախագահ Ռուքայ Քասախ, ինչպէս նաեւ բազմաթիւ այլ պաշտօնատարներ:

ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ

ԶԱԽԱՐԵԱՆԱԿԱՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ - ԻՐԱՔ ՏԱԳԼԱՊ

ՄԵՐ ԽՈՍՔԸ

ԱՆԿԱԽ ԱՊՐԵԼՈՒ ՀԱԻԱՏՔԻՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ

70 տարուան խորհրդային ամբողջատիրական տիրապետութեան ետք, 21 Սեպտեմբեր 1991ին հայրենի հողերուն վրայ ապրող մեր ժողովուրդը կը վերանորոգէր էր հաւատքը ազատ ու անկախ ապրելու հանգանակին նկատմամբ եւ ջախջախիչ մեծամասնութեամբ կու գար վերականգնելու Հայաստանի առաջին անկախ հանրապետութեան անանդը:

Պատմական պահը կը պարտադրէր իրերուն նոր դրութիւն մը: Աշխարհի երկու բեւեռներէն մէկը նկատուած խորհրդային Միութիւնը՝ իբրեւ նոր ժամանակներու «կաւե ռաբերով հսկան» կը կործանէր՝ իրեն հետ գերեզման տանելով աւելի քան 70 տարիներու բռնատիրական «վաստակ» մը: Այս ձեւով կը ձայնողէր նաեւ խորհրդային մտածելակերպը բնորոշած «պետական դրամատիրութեան» կառավարման ձեւը:

Ասոր դիմաց, համաշխարհային մակարդակի վրայ ի յայտ կու գար նոր իրականութիւն մը: Պերլինի պատին քանդումը կը հանգիստանար այն հիմնական ազդակը, որով երկբեւեռ երկրագունդը պիտի վերածուէր հետագայի միաբեւեռ «պոստիվ գիւղ»ին: Խորհրդային եւ Արեւելեան Եւրոպայի համայնաձայն երկիրներուն ժողովուրդները կը սկսէին ներքին եւ արտաքին թափառումները, բայց միեւնոյն ժամանակ կը ճաշակէին համայնաձայն կացութեան «ազատ աշխարհ»ի կացութեան անցում մը: Ժողովուրդները կը սկսէին ինքնուրույնաբար վարել իրենց քաղաքական, տնտեսական եւ մշակութային կեանքը:

Հայ ժողովուրդին ալ գիտակցեցաւ պահի կարեւորութեան: Թեւեւ անկախութեան հուշակամաբաժը եկաւ ինքզինք պարտադրելու ինքնուրույնութեան, սակայն հայրենիքի հայրենիքը տէրը կը կանգնէր վերահաստատուած անկախութեան: 21 Սեպտեմբեր 1991ին հայրենիքը անգամ մը եւս կը վերահաստատուէր իր հաւատքը հայրենիքի եւ ազգի գերագոյն արժեքներուն նկատմամբ:

Հայրենի ժողովուրդը իր ջախջախիչ մեծամասնութեամբ եկած էր արտաշայտելու իր հաւաքական կամքը: Ասիկա բնական երեւոյթ էր, որովհետեւ ժողովուրդներ եւ մարդկային հաւաքականութիւններ իրենց նպատակներուն կը հասնին այն ժամանակ միայն, երբ կարելիութիւնը կ'ունենան հաւաքական կեցուածք եւ տեսակետ արտայայտելու:

Պատմական եւ քաղաքական պայմաններու բերումով, անգամ մը եւս հայութեան առջեւ կարելիութիւն կը ստեղծուէր իր հայրենիքին՝ պատմական բնօրրանի տարածքին մէկ փոքր մասին մէջ անկախ կարգավիճակ վայելելու: 11 տարիներ առաջ տեղի ունեցած Հայաստանի անկախութեան վերականգնումը եղաւ այն հիմնական գրաւակներէն մէկը, որով Հայաստանը ու հայրենիքը առիքը ունեցան անկախաբար իրենց ներքին եւ արտաքին քաղաքական կեանքը վարելու, հակառակ այն իրողութեան, սակայն, որ անկախութեան վերականգնման յաջողող ժամանակաշրջանին, Հայաստանի օրուան իշխանութիւնները, յաճախ իրենց ապագային քաղաքական ուղեգիծով ճիշդ ուղիի վրայ չէին դրած երկրին դեկավարման գործընթացը:

28 Մայիս 1918 - 21 Սեպտեմբեր 1991: Երկու թուականներ, որոնք կը խտացնեն հայ ժողովուրդին դարաւոր մաքառումը արժանավայել կեանքի համար: Ինչ որ կը շարժուէր այս թուականները, ժողովուրդի մը ազգ դառնալու յանձնարարութիւն է, որովհետեւ առանց ինքնորոշման իրաւունքի, առանց անկախութեան ժողովուրդի մը գոյապայքարը նոյնիսկ իր հայրենիքին մէջ դատապարտուած է հիւժուսի եւ կլանուելու դանդաղ, բայց անխուսափելի իրականութեան:

Հայաստանի առաջին անկախ հանրապետութեան անկումէն շուրջ 70 տարիներ ետք հայ ժողովուրդի անկախութեան տուած հաւաքական «այո»ն կու գար լրացնելու եւ ամբողջացնելու Սարդարապատեան սխրանքներով սկսած երթը:

Հայաստանի անկախութեան վերականգնումը անկախաբարային իրադարձութիւն մըն էր հայ ժողովուրդին համար: Վերջինս կու գար բարձրաձայն ըսելու, որ ինքն ալ իր տեղը ունի ազատ ազգերու ընտանիքին մէջ: Կու գար վերջնականապէս կենսագործելու իր անկախ ապրելու հաւատքը, բոլոր մակարդակներուն վրայ:

Այսօր, Հայաստանի անկախութեան վերականգնումէն 11 տարիներ ետք, աւելի քան որե-

Շարք՝ էջ 8

ՊԱՏԵՐԱՊՁՄ, ԹԷ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

Սկիզբն էր Աֆղանիստանը: Ուաշինգթոն Սեպտեմբեր 11ի ահաբեկչական արարքներէն ետք «նախ հարուածել, ապա մտածել» քաղաքականութեամբ սկսաւ վարելու: Ամերիկայի Հետ չեղողներ «հարեկի» որակուեցան եւ աշխարհը զրուեցաւ կողմ բռնելու: Հարկադրանքին տակ: Աֆղանիստանի վրայ գինուորական գործողութիւնները նոյնքան յաջող էին, որքան՝ անյաջող: Թայպանները իշխանութեան Հեռացուեցան, սակայն «Քայլի» ղեկավարները յաջողեցան խոյս տալ եւ կառուցը շարունակեց վերականգման գործընթացը: Միւս կողմէ, պատերազմին գործած աւերներէն ետք, Աֆղանիստան կայունութեան ոչ մէկ նշաններ ցոյց կու տայ, այլ ընդհակառակը, քաղաքացիական յարուածութիւնները եւ հակառակութիւնները յատկապէս, տրուած ըլլալով, որ անոնք ծանր ճնշումի պիտի ենթարկուին հանրային կարծիքին կողմէ: Աւելին՝ Իրաքի քայքայումը մտահոգիչ պիտի ըլլայ նաեւ Միացեալ Նահանգներու մէջ այլ դաշնակիցին՝ Թուրքիոյ, որ հիւսիսային Իրաքի քիւրտերուն ստանալիք որեւէ

սակայն Քուրդի Փառուրի Պուշի վարչակարգի հաւասարակշռող միտքը, համբերատար ըլլալ կը յանձնարարէ:

Թէեւ մեծ թիւով դեկավարներ կը խուսափին ուղղակիօրէն դէմ կենալու իրաքը հարուածելու ընտրանքին, սակայն անոնք յատկօրէն կը յայտնեն, թէ այլ ընտրանքներ պէտք է որոնել, ինչպէս, օրինակի համար, քննիչներու վերադարձը:

Արդարեւ, իրաքի դէմ հարուածը ոչ միայն պիտի գայրացնէ մէկ միլիոն իսլամներ, որոնք արդէն ընդվզած են Սեպտեմբեր 11էն ետք իրենց նկատմամբ կատարուած ընդհանրացումներէն, այլ նեղ կացութեան պիտի մատնէ նաեւ արաբ ղեկավարները, եւ անոնցմէ Միացեալ Նահանգներու դաշնակից կամ անոր Հետ սերտ կապեր ունեցողները յատկապէս, տրուած ըլլալով, որ անոնք ծանր ճնշումի պիտի ենթարկուին հանրային կարծիքին կողմէ: Աւելին՝ Իրաքի քայքայումը մտահոգիչ պիտի ըլլայ նաեւ Միացեալ Նահանգներու մէջ այլ դաշնակիցին՝ Թուրքիոյ, որ հիւսիսային Իրաքի քիւրտերուն ստանալիք որեւէ

ազատութեան դէմ է:

ՄԱԿը նոյնպէս նեղ կացութեան մատնուած է. մէկ կողմէ ան կը գտնուի իր գոյութիւնը արդարացնելու եւ իր բանաձեւերու գործադրուած թիւերը ապահովելու հարկադրանքին տակ, սակայն, միւս կողմէ, կարելի է առարկել, թէ ինչու միայն Միացեալ Նահանգներու ուղեւ բանաձեւերն են, որ պիտի գործադրուին, եւ ոչ՝ միւսները:

Միջազգային քաղաքականութեան խաղաղութիւնը վրայ պատերազմի եւ խաղաղութեան ջատագովներուն միջեւ ճակատումը կը թուի, թէ վերջ պիտի գտնէ պատերազմի յաղթանակով, սակայն կարելի է սկզբնապէս, որ աշխարհի տարբեր շրջաններուն մէջ պատերազմ յայտարարող Միացեալ Նահանգներ վրէժխնդրութեան թիրախ չդառնան: Տակաւին թատրոն են մեր ակաճնութիւնը մէջ Պըն Լատչինի սարսափալից խօսքերը՝ «միջեւ այն ստեղծ որ խաղաղութիւն չկայ Պաղեստինի մէջ, խաղաղութիւն պիտի չըլլայ Ամերիկայի մէջ»:

Խ. Մ.

ԱԿՆԱՐԿ

ՄԵՂԵՂԻՒՄԸ ԿԱՐՕՏԸ

Մշակույթը հաւաքականութեան մը յառաջդիմութեան կենդանի արտայայտութիւնն է, որ կ'ապացուցէ նշանալի խմբաւորումի գրգռացման աստիճանակետերը, եւ որուն չափաքանը կ'ընտելէ տարբեր շրջանէ շրջան ու գաւազան ժամանակաշրջաններու տեւողութեան:

Օտար հաւաքականութիւններու մշակութային նորարարութիւններու օգտագործումը տարբեր մշակույթներու միջեւ յարաբերական կապեր ստեղծելով, փոխի ի փոխ օգտուելու համար կրնայ ծառայել իր նպատակին, երբ կը ստեղծուի հաղացման ըմբռնումը, ոչ թէ հայկական օտարացելու կամ ալ խառնուրդ մը ստեղծելու մերձեցումը...

Այստեղ է, որ սխալ կերպով կը ներմուծենք օտարի ունեցածը, եւ գայն հայացնելու փոխարէն՝ կ'այլաբերենք:

Օտար մշակույթներու նորարարութիւնները հայացնենք, եթէ կարողութիւնը ունինք, այլապէս ձգենք իրենց տիրոջ, որպէսզի մեր մշակութիւնը արմատները անփոփոխ սնանք:

Մշակույթի տարբեր բնագաւառներու գարգացումները արմատականէ հեռացման պէտք է առաջնորդեն, այլեւ արմատականի վրայ յանդիմանալու նորարարութիւններ պէտք է արձանագրեն՝ առանց խախտելու նշանալի մշակութիւն ունեցած ազգային դիմագիծը:

Տակաւին, քրքրաբար ոճային ու երբեմն երաժշտական ընդօրինակութիւնները նաեւ ազգային դաստիարակութեան փոխանցման գործընթացին վրայ իրենց բացասական դրոշմը կը ձգեն, երբ հաւաքական շարք մը ըմբռնումներ ժամանակի տեւողութեան կը վերանան:

Բնական է, որ ընդօրինակութիւններու «արուեստ»ը շատ աւելի նուազ ժամանակ կը պահանջէ շուկայական մտածելակերպին մէջ, որովհետեւ խնդրոյ առարկայ «արուեստագիտութեան» շատ աւելի կարճ ժամանակի տեւողութեան կրնան արտադրել առատ աշխատանք:

Նմանօրինակ արուեստագիտական մօտեցումներուն բացասական անդրադարձը կ'ըլլայ որակի յատկա նահանջի ցուցանում:

Վերջապէս, Սփիւռքի մէջ մշակույթը ապագային մտնում է դեմ պայքարելու կարեւորագոյն յեճակներէն մէկն է, որուն ամբողջական պահպանումը նաեւ միջոց կը հանդիսանայ Սփիւռքի պահպանման գոյապարտի երթին շարունակականութեան:

Մերը ընդ մերը կը լսուի սրինգի մեղեդին, որ հեւ ի հեւ կը հեռանայ...

ՐԱՖԵՒ ՏԵՄԻՐՃԵՆՆ

ԶՈՄԻ 2002Ի ԲԱՆԱԿՈՒՄԸ



Հ. Յ. Դ. Զաւարեան Ուսանողական Միութեան 2002ի տարեկան բանակումը տեղի ունեցաւ 6, 7, 8 Սեպտեմբերին, Այնճարի մէջ: Այս եռօրեայ բանակումը ունէր դաստիարակական եւ մարզական բաժիններէ բաղկացած յայտադիր, ինչպէս նաեւ՝ ընկերային խանդավառ մթնոլորտ: 45 բանակողներ բաժնուած էին երեք խումբերու, որոնք կը կրէին ԶՈՄԻ մէջ կազմաւորուած նահատակներու անունները՝ Սերժ Թովմասեան, Սարգիս Ֆուռուբեան եւ Մհեր Զուլֆաեան:

Բանակումին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ երեկոյան ժամը 5:30ին՝ դրօշակի արարողութեամբ: Հ. Յ. Դ. ԶՈՄԻ վարչութեան կողմէ բացման իր խօսքին ընթացքին Արմէն Թաշեան շեշտեց հաւաքական կեանքին ու կազմակերպական հզօրացման անհրաժեշտութիւնը: Ան բանակումը նկատեց հաւաքական կեանքին, անոր որոշումներուն եւ աշխատանքներուն նպատակ կարեւոր դաշտ մը եւ կազմակերպական զգալարանքները յարուած պահեցու անհրաժեշտութեան մէջ ներդրում մը: Ա. Թաշեան շեշտեց, թէ «մարմնաւորելու համար Զաւարեանի խիղճն ու անկէ մղողը բոլոր պարտաւորութիւնները պէտք է ունենայ համապատասխան կազմակերպութեան պատրաստակամութիւն» եւ համարում յայտնեց, որ «այս բանակումը իր փոխանցած գիտելիքներով, տուած փորձառութեամբ եւ մշակած ոգիով թափ պիտի տայ ԶՈՄԻ հետագայ աշխատանքներուն»:

Բանակումի տեւողութեան բանակողները ունեցան երեք դասախօսութիւն - գրոյցներ: Ուրբաթ, երեկոյան ժամը 6:00ին, բանախօս ժամը Կէօքեան խօսեցաւ Լեւոնային Ղարաբաղի տագնապին գծով շրջա:

Նային ուժերու բախումին եւ հարցի լուծման բանակցային գործընթացին մասին: Ան արցաստեց տագնապի լուծման համար առաջարկուած փաթեթային, փուլային եւ ընդհանուր պետութեան տարբերակները, ինչպէս նաեւ՝ Փոլ Կոպլիլի ծրագիրը եւ խօսեցաւ փարիզեան սկզբունքներուն, Քի Ուէլսի հանդիպումին եւ վերջին զարգացումներուն մասին:

«Հայ - թրքական շփումներու տասնամեայ հաշուէլին» թեմայով երկրորդ դասախօսութիւնը տեղի ունեցաւ Շարաթի, առաւօտեան ժամը 10:30ին: Յովհաննէս Թասլազեան նախ խօսեցաւ ընդհանրապէս գործնական եւ արդիւնաւէտ բանակցութիւններ վարելու եղանակին մասին, ապա անդրադարձաւ վերոյիշեալ ժամանակաշրջանին պետական թէ քաղաքացիական մակարդակներու վրայ հայ - թրքական բախումներէն եւ արձանագրուած շփումներուն: Դասախօսը վերլուծման ենթարկեց շրջանին մէջ առկայ շահագրգռութիւնները, երկու կողմերուն հարցին մօտեցման եղանակները, ձգտումները, այս գծով մամուլի միջոցով հաղորդուած պաշտօնական փոխադարձ պատգամները, ինչպէս նաեւ՝ «Հայ - թրքական Հաշտութեան Յանձնաժողով»ի երեւոյթը: Դասախօսը անդրադարձաւ նաեւ հայկական կողմին արձանագրած սխալներուն ու վրիպումներուն եւ շեշտը դրաւ բանակցային ամուր մեկնակէտերու կողքին ուժեղ դիրքաւորումով ներկայանալու անհրաժեշտութեան վրայ:

Շարաթի, երեկոյան ժամը 6:00ին տեղի ունեցաւ գրոյց մը՝ «Հայ երիտասարդութիւնը ներկայ պայմաններուն մէջ միութենական կեանքին առնչել» նիւթով: Զրուցաւար Սոնա Ճէրէճեան արձանագրեց այս հարցին շուրջ իւրաքանչիւր բանակողի մտորումները եւ գանտնք ենթադրութիւններու տակ գետեղելով յառաջացուց երիտասարդներու միութենական կեանքին մէջ ներառման միջոցներու ընդհանուր նախագիծ մը:

Երեք դասախօսութիւն - գրոյցներուն ընթացքին բանակողները աշխուժ մասնակցութիւն եւ մեծ հետաքրքրութիւն ցուցաբերեցին:

Երեք խումբերու բաժնուած բանակողները Շարաթի կէսօրէ ետք մասնակցեցան ուշի - փչչիբր զարգացման մրցումի մը: Իւրաքանչիւր խումբը բարձր մը հետեւելով պէտք է փնտթել վերապահուած 8 հարցներէն յարցերը եւ պատասխանէր իւրաքանչիւր հարցաթերթիկի 7 հարցումներուն: «Սարգիս Ֆուռուբեան» խումբը եղաւ մրցումին ախոյեանը:

Բանակումին ընկերային մթնոլորտը զարգացաւ խումբերուն միջեւ տեղի ունեցած մարզական խաղերուն ընթացքին, ինչպէս նաեւ՝ խորհրդի շուրջ կատարուած հաւաքներուն շնորհիւ: Բանակումը ունէր նաեւ իր ռատիօֆոնի եւ Զաւարեան մասին պատրաստուած պատի թերթը:

Բանակումի աւարտին տեղի ունեցաւ նաեւ «ազատ բեմ», ուր բանակողները արձանագրեցին բանակումին մասին իրենց նկատողութիւններն ու դիտողութիւնները եւ կատարեցին առաջարկներ: Դրօշակի արարողութեան ետք բանակողները հրաժեշտ տուին բանակային՝ ԶՈՄԻ բանակումի աւանդը շարունակելու եւ գայն հարստացնելու հաստատակամութեամբ:

ԱՆՋՐՊԵՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

ՀԱԿԱՌԱԿ ՍԱՌՈՅՅԻ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԻՆ՝

ԴԷՊԻ ՀՐԱՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՄՕՏԱԼՈՒՏ ՉԷ

Հրատ կրնայ անօրէն «Ուայլտ Ուեթ»-ին նմանիլ, եթէ սեփական մարզին կողմէ ֆինանսաւորուած արկածախնդիր անձեր հոն հասնին կառավարութեան զօրակցութիւնը վայելող առաքելութիւններէ առաջ, ըսաւ Բրիտանիոյ Աստղագիտութեան Հիմնարկին մասնագէտներէն Մարթին Ռիս այս ամիս:

Նախքան մարդոց Հրատ հասնելը՝ շատ հաւանաբար ամբողջ արե-

(փոխանակ մաս կազմելու փոխադրուող բեռները), ճամբորդութիւնը շատ աւելի դիւրին եւ ափսոսանքով ըլլայ:

Ռիս կ'երեւակայէ «անջրպետային վերելակ մը», որ կարենայ մարզիկ եւ առարկաներ գետինէն արբանեակ մը բարձրացնել:

Իսկ ճամբորդութեան մնացեալ մասին համար կարելի է թերեւս կորիզային ուժանիւթով բանող հրթիռ մը օգտագոր-

ցած է մոլորակին վրայ գտնուած ջուրին մէկ մասը, երբ Հրատ ջերմ եւ թաց վայրէ մը վերածուած է այսօրուան պող, չոր անապատին:

Հրատը ուսումնասիրող գիտնականները շարք մը պատճառներով ջուր կը փնտռեն հոն: Սկսելու համար, կեանքը, հասկանալով, ջուրի պէտք ունի, եւ ոեւէ մէկը, որ կ'ուզէ որոշ ժամանակ մը անցընել մոլորակին վրայ, ջուրի կարիքը պիտի ունենայ՝ խմելու եւ վառելանիւթի համար իրեն ջրածինի աղբիւր գործածելու:


Յայտնաբերուած նաեւ օգտակար պիտի ըլլայ Հրատի օդը եւ երկրաբանութիւնը հասկնալու համար:

Կը թուի, թէ Հրատ անցեալին մակերեսի վրայ ջուր ունեցած է: Կան խորունկ ձորեր, որոնցմէ մէկը աւելի խորունկ եւ լայն է, քան՝ երկրագունդի վրայ գտնուող որեւէ ձոր: Կան նաեւ վայրեր, որոնք չորացած լիճի կամ ծովու յատակի կը նմանին:

Ներկայիս մակերեսը չոր եւ փոշոտ է, իսկ բեւեռները ծածկող սառույցը սառած բնածուխի երկթթուիդ է (քարպտն տալոքայտ): Նկատի ունենալով, որ մակերեսային միջին ջերմաստիճանները նուազ 53 սելսիուս

«ՎԱՅՔԻՆԿ ԼԵՆՏԵՐ» ՀՐԱՏԻ ՎՐԱՅ ԷՋՔ ԿԱՏԱՐԱԾ ԱՌԱՋԻՆ ԱՆՋՐՊԵՏԱԿԱՆԸ

Յուլիս 1976ին Հրատի վրայ առաջին անգամ ըլլալով էջք կատարած «Վայքինկ Լ Է Ն Ե Ր Ը» անջրպետաւառու կողմէ առնուած այս պատկերը ցոյց կու տայ Արէս վայրին, ուր կարելի է տեսնել, թէ հեռաւոր անցեալին ջուր հոսած է այդ շրջանին մէջ:



Ամերիկեան անջրպետաւառու Հրատը «Կը դիտեն» 1965էն ի վեր, երբ «Մարինըր 4» առաջին անգամ մոլորակը նկատեց համեմատաբար մօտէն (10 հազար քմ.): Նորհրդային Միութիւնը դէպի Հրատ անջրպետաւառու ղրկելու սկսած է 1960ին, անոր առաջին մոլորակին մօտակայ թռիչքը տեղի ունեցած է 1962ին, ըստ ՆԱՍԱի:

Մայիսին հրապարակուած յայտնաբերումները կատարուած են Հրատին շուրջ ծիրի վրայ թափուած ՆԱՍԱի «Մարս Օտիսի» անջրպետանաւով կողմէ, որ սկսած է Հրատի մակերեսը նկարել Մարտին:

Յառաջիկայ տարի ՆԱՍԱ կը ծրագրէ Հրատի վրայ ընթացող 2 փոքր փոխադրակառքեր

գործելով երկրագունդին ծիրային արագութիւնը, անոր մոլորամտայու համար, մօտ 483 միլիոն քմ. պիտի ըլլայ: Ըստ կարգիչի, Հրատ երթ ու դարձ մը, մակերեսին վրայ 30 օր մնալով, տարի մը պիտի տեւէ:

Նախքան մարդոց մեկնումը՝ մարդամբեռներ պէտք է օգտագործուին սարքեր եւ պահեստներ փոխադրելու համար: Կարգիչին համաձայն, ասիկա կարելի է ընել 20էն 40 տարիէն, եթէ արտօնութիւն եւ ֆինանսաւորում ապահովուին: «Եթէ յառաջիկայ 40 տարիներուն տեղի Հրատի մակերեսը նկարել Մարտին:

Սակայն կը թուի, թէ ամէն մարդ յուսախար պիտի չըլլայ: Մէրիլէնտ

«ՄԱՐՍ ՓԱԹՅԱՅՆՏԵՐ»



Յուլիս 1997ին Կարմիր մոլորակին վրայ էջք կատարած «Մարս Փաթֆայնտըր»ը առաջինն էր, որ առանց ծիրի վրայ դառնալու՝ էջք կը կատարէր: Անիկայ նաեւ «արագ շինուած, ածան, ձեռնուտ» անջրպետանաւերու շարքի մը առաջինն էր:

«Մարս Փաթֆայնտըր»ի մաս կազմող «մարդամբեռնայ» «Սոնարըր»ը, որ կ'երեւի պատկերին մէջ, ամբողջ 3 ամիս պտտած էր մոլորակին վրայ՝ տեղեկութիւններ ղրկելով երկրագունդ:

գակնային զրուցութիւնը հետախուզուած պիտի ըլլայ մարդամբեռնայ փոքրիկ անջրպետանաւերով, սակայն մէկ դարէն մոլորակին վրայ մարդիկ մնալու ներկայութիւն կրնան ըլլալ, ըստ Ռիսի:

Ենթակառուցող մը հաստատումէն ետք դէպի Հրատ ճամբորդութեան ծախսերը պիտի նուազին, ինչ որ կրնայ տարբեր տեսակի հետախուզական արշաւներու կառելութիւնն ալ:

Ոչ մասնագէտ աստղագէտներ արդէն միլիոնաւոր տոլարներ վճարած են դէպի անջրպետայնցութիւններու համար: Եթէ երկրագունդին ձգողութեան խուսափելու համար աւելի ձեռքնուտու մոլորմի զրուցութիւններ եւ վառելանիւթ ապահովուի գետնի վրայ

ՄԱԿԵՐԵՍԻՆ ՏԱԿ՝ ՍԱՌՈՅՅ

Այս տարուան Մայիսի վերջերուն ՆԱՍԱ յայտնեց, թէ սառույցի հսկայ ծոց մը գոյութիւն ունի Հրատի մակերեսին տակ՝ օգտագործուելու պատրաստ, ապագայ հետախուզներու կողմէ, իբրեւ վառելանիւթի աղբիւր եւ թերեւս նոյնիսկ՝ ըմպելի ջուր:

Մասնագէտներ օրին «Սայլընս» թերթին մէջ գրեցին, թէ սառույցը կրնայ թերեւս ապաստան ըլլալ կեանքի, եւ թէ նախկին յետախուզիչ կը բացատրէ, թէ ո՛ր կը ար-

են, իսկ մթնոլորտը բարակ է, գիտնականներ մեծ յոյս չունին մակերեսին վրայ հեղուկ ջուր գտնելու:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԵՏԱՆՈՒՋՈՒԹԻՒՆԸ՝ ՆԱՍԱԻ ԹԻՐԱԽՆԵՐԸՆ ՄԵՎԸ

ՆԱՍԱի գլխաւոր նպատակն է միջոցը գտնել, որ մարդիկ մնալու կերպով Հրատի վրայ ապրին ու աշխատեն: Հրատը միշտ ալ գլխաւոր թեկնածուն եղած է, մոլորակային առաջին այցելութեան մը համար, հսկանակ անոր որ կարգ մը գիտնականներու կարծիքով, մարդիկ ղրկելը ամէնէն անգործանակն ձեռնէ անոր մասին տեղեկութիւններ քաղելու:



2000ին «Մարս Կլոպըր Սըրվէյըր»ի կողմէ յայտնաբերուած այս հեղեղատները կը յիշեցնեն երկրագունդի հեղեղները:

Հրատի վրայ կեանքի կարելիութիւնները յայտնաբերելու համար ՆԱՍԱ որդեգրած է «ջուրից հետեւ» ռազմավարութիւնը: Ասիկա կը նշանակէ հետախուզել բաժնիներ, որոնք չորացած գետի հուններու կը նմանին, եւ՝ ժայռի տեսակներ, որոնք կը կազմուին միայն այն ատեն, երբ ջուր գոյութիւն ունի:

Ղրկել, իսկ Անջրպետաւառուներէն ԵՐԱՊԻՍԿԱՆ Հրատի հետախուզութեան խուսափելու համար, մօտ 483 միլիոն քմ. պիտի ըլլայ: Ըստ կարգիչի, Հրատ երթ ու դարձ մը, մակերեսին վրայ 30 օր մնալով, տարի մը պիտի տեւէ:

Ներկայիս մակերեսը չոր եւ փոշոտ է, իսկ բեւեռները ծածկող սառույցը սառած բնածուխի երկթթուիդ է (քարպտն տալոքայտ): Նկատի ունենալով, որ մակերեսային միջին ջերմաստիճանները նուազ 53 սելսիուս են, որոնք չորացած լիճի կամ ծովու յատակի կը նմանին:

Նորհրդային Միութիւնը դէպի Հրատ անջրպետաւառու ղրկելու սկսած է 1960ին, անոր առաջին մոլորակին մօտակայ թռիչքը տեղի ունեցած է 1962ին, ըստ ՆԱՍԱի:

Մայիսին հրապարակուած յայտնաբերումները կատարուած են Հրատին շուրջ ծիրի վրայ թափուած ՆԱՍԱի «Մարս Օտիսի» անջրպետանաւով կողմէ, որ սկսած է Հրատի մակերեսը նկարել Մարտին:

համալսարանին դասախօսներէն Ռոպըրթ Փաթք Հրատի հետախուզութեան ի նպաստ կ'արտայայտուի, սակայն ո՛չ մարդոց կողմէ:

«Ներկայիս գիտական մեծագոյն հետապնդումը մեզի հետ կապ չունեցող կեանքի յայտնաբերումն է», կ'ըսէ ան՝ աւելցնելով, որ Հրատը յաւանական չէ մարդ ղրկել հոն, որչափայն այդ ընէ:

Հարցը մարդոց փոխարած մանրէներն են, ըստ Փաթքի: «Մէկ անձ իր աղիքներուն մէջ աւելի մանրէներ ունի, քան՝ երկրագունդին ամբողջ տեսլուծութիւնը», կ'ըսէ ան, դիտել տալով, որ կայ այն վտանգը, թէ «պիտի վարակուի ճիշդ այն բանը, զոր կ'ուզես ուսումնասիրել»:

Յամենայնդէպս մասնագէտներ երկար ժամանակ կը կարծուին հաստատուելու համար, որ Հրատին վրայ գտնուած նիւթը իսկապէս սառած ջուր է: Սակայն անոնք կը թուին համոզուած ըլլալ այդ գծով:

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՅԱՅՏՆԱԲԵՐՆԵՐ ՍՏՈՐԵԿԻԲԵՍ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՄԱՆՐԷՆԵՐ

Հետազոտողներ Այտընոյի (Մ. Նահանգներ) Պեկըրնէտ լեռներուն տակ, 200 մետր խորութեամբ, տաք աղբիւրի մը մէջ գտած են մանրէներու «զաղուծ մը», զոր երկրագունդին վրայ որեւէ այլ տեղ կարելի չէ գտնել:

Գիտնականներ կ'ըսեն, թէ այս յայտնաբերումը կրնայ բացատրել, թէ Հրատի վրայ ի՞նչպէս կեանք գոյութիւն կրնայ ունենալ՝ առանց ջուրի կամ արեւու ճառագայթներու:

Մանրէները իրենց էներգիան կը ստանան ժայռերուն մէջ գտնուող ջրածինէն եւ ո՛չ՝ արեւու շողերէն:

Նկատի ունենալով, որ շողերէ եւ թթուածինէ զուրկ նման շրջապատեր գոյութիւն ունին Կարմիր մոլորակին վրայ եւ նոյնիսկ Լուսնի վրայ, նման էակներ կրնան տեղեկութիւններ հայթայթել այլ աշխարհներու մէջ կեանքի որոնումին մասին, կ'ըսեն մասնագէտները:

Մանրէները կը պատկանին ապրող էակներու հին խմբակի մը, որ Արքիա կը կոչուի:

Անոնք գտնուած են Մէսէչուսէց համալսարանի մասնագէտներէն փրոֆ. Տերը Լաւրի եւ ամերիկեան «Ճիոլոցիքը Սըրվէյըր»ի գիտնականներէն տղթ. Ֆրէնսիս Ծափլէյի գլխաւորած խմբակին կողմէ:

Կեանքը կարիք ունի ջուրի եւ էներգիա աղբիւրի մը, եւ երկրագունդին վրայ ապրող գրեթէ բոլոր էակներուն էներգիան գլխաւոր աղբիւրը արեւու շողերն են:

Հրատի եւ մեր արեգակնային զրուցութեան այլ մոլորակներու կամ լուսիններու վրայ (ուր կրնայ կեանք գոյութիւն ունենալ) եթէ հեղուկ ջուր կայ, ապա անիկա մակերեսին տակ կը գտնուի, այսինքն՝ վայրի մը մէջ, ուր արեւու լոյս չկայ: Հետեւաբար, եթէ հոն կեանք կայ, անիկա էներգիա այլ աղբիւր մը պէտք է օգտագործել, կ'ըսեն մասնագէտները:

Լաւրի կը յայտնէ, որ յայտնաբերումը առաջին անգամ ըլլալով ցոյց կու տայ, թէ կարգ մը մանրէներ կրնան բարգաւաճել հակառակ արեւու լոյսի չզոյլութեան՝ ջրածին կազ գործածելով իրեն էներգիա աղբիւր:

Ըստ Լաւրիի, երկրաբաններ եւ մանրէներու մասնագէտ կենսաբաններ առնուազն տասնամեակէ մը ի վեր կը փնտռեն երկրագունդին վրայ գտնուող մանրէներ, որոնք կրնան ստորերկրային վայրերու մէջ, առանց արեւու շողերու, միայն ջրածինով գոյատեւել:

Ծափլէյ ուսումնասիրութեան համար յատկապէս ընտրած է Այտընոյի այդ վայրը, որովհետեւ հոն երկրաբանական պայմանները նման են Հրատի վրայ ակնկալուած պայմաններուն:

Հրատի վրայ այդ ժայռերու խորունկ վայրերուն մէջ ջուրը մակերեսէն մեկուսացած է հազարաւոր տարիներէ ի վեր, կը բացատրէ ան՝ յայտնելով, որ անոնք օրկանական նիւթէ զուրկ են, սակայն կարելի է քանակութեամբ ջրածին կը պարունակեն:

ՆԱԵՒ ԱՆԹԱՐԲԹԻՔԻ ՄԵՋ

Միւս կողմէ, քանատացի եւ նոր գեղանտացի հետազոտողներ Անթարթիքի (հարաւային բեւեռ) չափազանց պող, ժայռոտ եւ չոր հողերու տակ տոկոսն մանրէներու եւ սոււնկերու «զաղուծներ» գտած են:

Ըստ Օնթարիոյի ԵՊՔ համալսարանի մասնագէտներէն Ռելիքըմ Մըսէլիի, հողը, ուր կ'ապրին մանրէները, միլիոնի մէջ 3 հազար մաս աղ կը պարունակէ: Ան կ'ըսէ, որ ընդհանրապէս ապրող էակները կը խուսափին աղի նման բարձր համեմատութիւններէ, սակայն Անթարթիքի չոր հովիտներուն մէջ, ուր պայմանները նման են Հրատի վրայ գոյութիւն ունեցող պայմաններուն, անոնք կրնան կենսաբանական էակներու ի նպաստ ըլլալ:

Աղբեր շատ մեծ համեմատութեամբ կը նուազեցնեն սառեցման կէտը, ինչ որ կը նշանակէ, թէ հակառակ չափազանց ցած ջերմաստիճաններու, ջուրը կրնայ մնալ հեղուկ վիճակի մէջ, որուն կեանքի ծաւթ բոլոր տեսակները կարիք ունին:

Հետազոտողներու խմբակին համաձայն, միլիոնաւոր տարիներու ընթացքին երկրաբանական պայմանները կրնան նման աղի ջուր ստեղծած ըլլալ Հրատի վրայ:

Անցնող քանի մը տասնամեակներուն կեանքի անծանօթ տեսակներ գտնուած են երկրագունդին վրայ: Անոնք անհաւատալիօրէն դժուար պայմաններու կրնան տոկալ:

Անոնք գտնուած են լիճերու սառույցներու հաստ խաւերու տակ, հրաբխային եռացող աւազաններու մէջ եւ ովկիանոսի յատակը ծծուած արձակող ճեղքներու երկայնքին:

Եթէ ապագային մասնագէտներ Հրատի վրայ նման էակներ փնտռեն, Անթարթիքի հողին ուսումնասիրութիւնը կրնայ օժանդակել հետախուզութեան թեկնածու վայրերուն որոշումին:

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ (Աղբիւրներ՝ «Պի. Պի. Սի.», «ՌՈՅՈՐԸ», «Սի. ԷՍ. ԷՍ.»)

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի բնագիրը ընթերցի գիրով (հաստատութեան պարագային՝ Գաղափարաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազդակ»ի ծանուցումներու գրասենյակը:

«ՄՈՒԿ-ԱՍՏՂԱՆԱԻՈՐԴՆԵՐ» ԿՐՆԱՆ ԴԷՊԻ ՀՐԱՏ ԸԱՄԲԱՆ ԲԱՆԱԼ

Առաջին ստնաւորները դէպի անջրպետ ղրկելու նախաձեռնութիւն մը՝ բազմապատկուելու նպատակով միայն, քանի մը մեծ համալսարաններու պօրակցութիւնը ապահոված է, ըստ «Մարս Սոսայիթի» սեփական կազմակերպութեան, որուն նպատակը Հրատի հետախուզութիւնն է:

Անիկա կը յուսայ մուկերու «անձնակազմ» մը 2 ամիս դէպի անջրպետ ղրկել, կրճողներուն բաւարար ժամանակ տալով, որ ծնին ձագեր, որոնք հասուն ղառնայու առիթը պիտի ունենան:

«Մուկ-աստղանաւոր»ները պիտի պետեղուին շրջապատի մը մէջ, որ Հրատի ձգողական ուժը (երկրագունդին մէկ երրորդը) կը ներկայացնէ, նպաստելու համար մարդոց դէպի Կարմիր մոլորակ ուղեւորու-

թիւններու ծրագրումին:

Իր «Չրջապտոյտ»էն ետք յատուկ անջրպետանաւը երկրագունդ պէտք է վերադառնալ, եւ գիտնականներու խմբակներ առիթը պիտի ունենան ուսումնասիրելու մուկերն ու անոնց ձագերը՝ առաջին տեղեկութիւնները քաղելով ձգողական նուազ ուժի պայմաններու մէջ կեանքի եւ աճումի մասին:

Թռիչքը, որ 2005ին կը նախատեսուի, կրնայ լոյս սփռել այն հարցին շուրջ, թէ արդէօք «կեղծ» ձգողականութիւնը կրնայ ձգողութեան պարամետրներու պարագային մարդիկ ոսկորի խտրութեան, բնական դիմադրականութեան եւ մկանային ուժի նուազում արձանագրած են:

Թռիչքը, որ 2005ին կը նախատեսուի, կրնայ լոյս սփռել այն հարցին շուրջ, թէ արդէօք «կեղծ» ձգողականութիւնը կրնայ ձգողութեան պարամետրներու պարագային մարդիկ ոսկորի խտրութեան, բնական դիմադրականութեան եւ մկանային ուժի նուազում արձանագրած են:

Երբ Հրատ երկրագունդէն ամէնէն մօտիկ հեռաւորութեան վրայ կը գտնուի, անիկա շուրջ 55 միլիոն քմ. հեռու կ'ըլլայ մեր մոլորակէն, սակայն անջրպետանաւու մը ուղեւորութիւնը՝ օգտա-

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Բ Ն



ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՍԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

ՆՇՇՄԷ - Հ.Ս.Ը.Ս.՝ 3 - 1

Ֆուտբոլի բարեկամական մրցումի մը, երէկ Նըմէի դաշտին վրայ (Մանարա) տեղի ունեցած հանդիպումին, դաշտին տէրերը արձանագրեցին յաղթանակ մը, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով իրենց հիւրը՝ Հ.Ս.Ը.Ս.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը:

Ա. կիսախաղը վերջ գտաւ 1 - 1 արդիւնքով: Հ.Ս.Ը.Ս.ի կողմէն նշանակեց Տէսի Նասար՝ փենսալիստ:

Գրեթէ միջակ մակարդակի տեղի ունեցած այս մրցումին, երկու խումբերն ալ փորձեցին իրենց մարզիկները՝ հիմնական կազմ մը ձգելու համար:

Նշենք, թէ այս մրցումը Հ.Ս.Ը.Ս.ի ներկայացուցչական խումբին համար եղաւ վերջին փորձ-մրցումը, նախքան ամբողջական կազմին յստակացումը:

ԱՆԳԼՈՅ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՐՍԵՆԱԼ ԿԸ ՄՆԱՅ ԱՌԱՋԻՆ



Ռուտ Վան Նիսթըլը

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն, Արսենալ ամբողջովեց պարտութեան իր դիրքը, իր դաշտին «Հայպըրի» մէջ 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պոլսընը: Լոնտոնեան կազմը սակայն իր յաղթանակը արձանագրեց մրցումին վերջին վայրկեանին, շնորհիւ՝ Նվանքով ֆանուի նշանակած կողմէն: 26րդ վայրկեանին Թիբերի Հանրի բացաւ մրցումին հաշիւը, մինչ 47րդ վայրկեանին Կէրրի Ֆէրրիս նշանակեց հիւր կազմին կողմ, որ մրցումը աւարտեց տասը մարզիկով, երբ իվան ֆամիս ստացաւ կարմիր քարտ մը (80րդ):

2րդ դիրքը գրաւող Լիվըրպոլ իր կարգին յաղթանակ մը արձանագրեց, երբ «Էնֆիլտ» մէջ շուրջ 44 հազար համակիրներու ներկայութեան 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Ուէսթ Պրոմուտիչ Ալպիընը: Միլան Պարոս (56րդ) եւ Ճոն Առնէ Ռիսէ (90րդ) նշանակեցին յաղթական կազմին կողմը: Նշենք սակայն, թէ հիւր կազմը մրցումին մեծ մասը շարունակեց տասը մարզիկով, երբ Ռասըլ Հոլմս 35րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստացաւ:

«Օլտ Թրեֆորտ» մէջ տեղի ունեցած մրցումին, որուն ներկայ էր աւելի քան 67 հազար համակիր, Մանչեսթըր Եունայթըտ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Թոթեմհեմը, շնորհիւ՝ Ռուտ Վան Նիսթըլը: Նշանակած փենսալիստին (63րդ):

Յաղթանակ արձանագրողներու շարքին եղաւ նաեւ Նիւքասըլ, որ իր դաշտին վրայ 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Սանտըրլէնտը: 52 հազար համակիրներու ներկայութեան Քրէյկ Պելամի (2րդ) եւ Էլըն Շիբըր (39րդ) նշանակեցին յաղթական կազմին կողմը:

Ստորեւ՝ 7րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Աթոն Վիլա - Էվըրթըն	3 - 2
Պլեյպըրն - Լիծ	1 - 0
Արսենալ - Պոլսըն	2 - 1
Լիվըրպոլ - Ուէսթ Պրոմուտիչ	2 - 0
Մանչ. Եունայթըտ - Թոթեմհեմ	1 - 0
Միտլըպոլ - Պրոմուտիչ	1 - 0
Նիւքասըլ - Սանտըրլէնտ	2 - 0
Ստուրմիքսթըն - Չարլթըն	0 - 0
Ուէսթ Համ - Մանչեսթըր Սիթի	0 - 0

ԴԱՍԱԲՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Արսենալ	17
2.- Լիվըրպոլ	15
3.- Թոթեմհեմ	13
4.- Չելսի	12
5.- Լիծ	12

«ՉԵՍՓԻՆՁ ԼԻԿ» ԱՅՍՕՐ ՏԵՂԻ Կ՝ՈՒՆԵՆԱՆ ՌԻԹ ՄՐՅՈՒՄՆԵՐ

«Չէսփինզ Լիկ» ֆուտբոլի մրցաշարքին Ա. հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան ութ ճակատումներ, Ե. 2., Է. Ե. Ե. խմբակներէն ներս: Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը (բոլորն ալ տեղի պիտի ունենան ժամը 21:45ին՝ Պէյրոնի ժամով):

- Ե. ԽՄԲԱԿ
- Նիւքասըլ - Ֆէյնուորտ Ռոբերտս
- Եունայթըտ - Տիւսթըն
- Չ. ԽՄԲԱԿ
- Պայեր Լեյքըրուպըն - Մանչեսթըր Եունայթըտ
- Մաքայի Հայֆա - Օլիմպիա
- Է. ԽՄԲԱԿ
- Լանս - Պայեր Միւնիխ
- Տեփորթի Բորնիս - Ա. Սէ. Միլան
- Բ. ԽՄԲԱԿ
- Տ. Ք. Պրիմ - Լոքոնթրի Մոսկոու
- Կայաքասարայ - Պարսելոնա

ՖՐԱՆՍԱ

ՆԻՍ - ՕՔՍԷՌ ՊԱՅՔԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ



Մարսէյի առաջին կողմը Գառնակաձ Սաիս (ճախիճ)

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 8րդ հանգրուանի մրցումներուն, Նիս շարունակեց մնալ առաջին, իր ունեցած կողմը շնորհիւ գերապահեցելէ ետք Օքսէրը: Նիս, որ 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Թրուան, շնորհիւ Քրիսթոֆ Մեյլիսի նշանակած փենսալիստին (40րդ), յաջողեց

ցաւ տասը մարզիկով պայքարիլ մինչեւ մրցումին աւարտը, նկատի ունենալով, որ 41րդ վայրկեանին անոր մէկ մարզիկը՝ Ռոմէն Փիթո կարմիր քարտ ստացաւ:

Մարսէյ 3 - 1 արդիւնքով յաղթական վերադարձաւ Լը Հաւրի դաշտէն, շնորհիւ՝ Լամին Սախոյի (45րդ), Փասքալ Եոհանարնի (58րդ) եւ Ֆապիօ Սելեսթինիի (89րդ) նշանակած կողմերուն:

Կոլերով եւ կարմիր քարտերով հարուստ մրցումէ մը ետք վերջ գտաւ Լիոն - Մոնպո մրցումը, ի նպաստ՝ իշխանապետական կազմին (3 - 1): Լիոն մրցումը աւարտեց ինը մարզիկով, իսկ Մոնպո՝ տասը:

Ստորեւ՝ 8րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Փարիզ Սէն Ժերմէն - Պասթիա	1 - 1
Լիոն - Մոնպո	1 - 3
Պորսո - Լանս	1 - 0
Ածաքսիօ - Սոչո	0 - 1
Օքսէռ - Սըլան	3 - 1
Լը Հաւրը - Մարսէյ	1 - 3
Լիլ - Կէնկաճ	2 - 1
Նիս - Թրուա	1 - 0
Ռէն - Նանթ	1 - 0
Սթրազպուրկ - Մոնպելիէ	3 - 2

ԴԱՍԱԲՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Նիս	17
2.- Օքսէռ	17
3.- Պորսո	14
4.- Մարսէյ	14
5.- Մոնպո	13
6.- Փարիզ Սէն Ժերմէն	13

ՊՈՒՆՏՍՈՒԿԱ

ՊԱՅԷՐՆ, ՇԱԼՔԷԻ ՏՈՐԹՄՈՒՆՏ՝ ԶԱՐԴ ԱՆՊԱՐՏԵԼԻ

Գերմանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Պուներայիկա) 6րդ հանգրուանի մրցումներուն, պարագույնի դիրքը գրաւող Պայերն Միւնիխ արձանագրեց եղանակի իր 5րդ յաղթանակը, 3-1 արդիւնքով պարտութեան մատնելով Քոբլանցը: Այլեքսանտր Յիլըր (45րդ), Միքայել Պայաք (47րդ) եւ Ճիմպանի Էլպեր (76րդ) նշանակեցին յաղթական կազմին կողմը, իսկ Փատլո Ռիսթ Քոբլանցի կողմը (19րդ): Պայերնի նման ցարդ

անպարտելի են Շալքէ եւ Պորուսիա Տորթնուտ, որոնք սակայն արձանագրած են տուպ յաղթանակ: Տորթնուտ իր յաղթանակը արձանագրեց Հանս Թոնթրի դաշտին վրայ (1 - 0), շնորհիւ՝ Եան Քոլըր նշանակած կողմին (12րդ):

Շրթակարթ իր դաշտին վրայ 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Արմինիա Պիլքֆելտը, շնորհիւ՝ Քեիլի Քուրանի իրագործած հէթ-րիքին (5րդ, 64րդ եւ 69րդ):

Vivez en lumière!

C. AYANLIAN & SONS
Dora, (01) 265222/3/4/5/6 - Gemmayze, (01) 447000-445396 - (03) 627726/9
Fax: (01) 265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb
www.ayanlian.com

ԲԱԼԶԻՕ

ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՅ ԴԺՈՒԱՐ ՅԱՂԹԱՆԱԿ ՍԸ



Տէլ Փիեռօ (աջէն երկրորդը) իր խմբակիցներուն հետ կը սօցէ իր Գառնակաձ կողմէն մէկը

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիօ) 2րդ հանգրուանի մրցումներուն, չորս խումբեր՝ Ա. Սէ. Միլան, Եունայթըտ, Փիաչենցա եւ Ինթեր Միլան հանդիսացան այն խումբերը, որոնք արձանագրեցին եղանակի երկրորդ յաղթանակը:

Ինթեր Միլան դժուարութեամբ պարտութեան մատնեց Ռեճինան (2 - 1), երբ մրցումին վերջին վայրկեանին Ալվարօ Ռեքոպա նշանակեց իր կազմին յաղթանակի կողմ: Անոր նշանակած կողմին մէկ վայրկեան առաջ Սիուստրէ Նաքամուրա փենսալիստով նշանակած էր դաշտին տէրերուն հաւասարութեան կողմը: Մրցումին հաշիւը բացած էր Քրիսթիան Վիերի (6րդ):

Եունայթըտ 2 - 0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Էմփոլիի դաշտէն, շնորհիւ՝ Ալեքսանտրօ Տէլ Փիեռոյի նշանակած կողմերուն (6րդ՝ փենսալիստով եւ 74րդ):

Տիւսթըն Սիմոնի կողմէն նշանակուած կողմը (86րդ) բաւարար եղաւ, որ անոր կազմը՝ Լազիօ Ռոմա 1 - 0 արդիւնքով յաղթական վերադարձաւ Թորինոյի դաշտէն:

Ա. Սէ. Միլան 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Փերուճիան, շնորհիւ՝ Փատլօ Մալտինիի (40րդ), Ֆիլիփօ Ինցակիի (50րդ)

եւ Քլարէնս Սիտորֆի (65րդ) նշանակած կողմերուն:

Ստորեւ՝ 2րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Աթլանթա - Պոլոնիա	2 - 2
Քիեւօ Վերոնա - Պրեշիա	1 - 2
Փարմա - Ընժօ	2 - 0
Փիաչենցա - Ուտինէզէ	2 - 0
Ռեճինա - Ինթեր Միլան	1 - 2
Ա. Էս. Ռոմա - Մոնպեզ	1 - 2
Թորինօ - Լազիօ Ռոմա	0 - 1
Ա. Սէ. Միլան - Փերուճիա	3 - 0
Էմփոլի - Եունայթըտ	0 - 2

ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ
ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

- Over Bed Table
- All Kinds Of Oxygen

We Also Provide

- Laboratory services
- Physiotherapist
- Nurses Aids
- P.T.S. (AMBULANCE)

ՅՈՒՅԱՍՐԱՇ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ
ԳՐԱՍԵՆՏԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ՃԵԼԵ, Բ. ՅԱՐԿ
ՇԵՆ. (02) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.

